ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը հուլիսի 2020 թ. N 143
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ,48-րդ և 53-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Ռիմա Գրիշի Մանուկյանին և Շոթա Ռաֆայելի Սահակյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 1279012/ բնակելի տունը և դրա սպասարկման ու պահպանման համար հողամասը վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավ արևելեյան թաղամաս, 3-րդ փողոց, թիվ 3 բնակելի տուն:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը հուլիսի 2020 թ. N 144
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Ռազմիկ Վալերիի Մանվելյանին տալ բնակելի տան շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեց պատկանող Նոր Հաճն համայնքի Սարգիս Ջուլֆյան թաղամասի 3-րդ փողոցի թիվ 10 հասցեի հողամասում:
(շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռազմիկ Վալերիի Մանվելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը հուլիսի 2020 թ. N 145

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, հաշվի առնելով Գառնիկ Արտաշեսի Մելիքյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի հուլիսի 27-ի N 27072020-07-0183 վկայական) Անդրանիկի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող 20.65 քառակուսի մետր արտաքին մակերեսով մառանը (ներքին՝ 12.77 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.02 հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Գառնիկ Արտաշեսի Մելիքյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) մառանի 1 քառակուսի մետրի համար՝ 6300 (վեց հազար երեք հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

3.2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

4. Գառնիկ Արտաշեսի Մելիքյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 130095 (մեկ հարյուր երեսունհինգ հազար իննսունհինգ) դրամ՝ մառանի գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 588000 (հինգ հարյուր ութսունութ հազար) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գառնիկ Արտաշեսի Մելիքյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գառնիկ Արտաշեսի Մելիքյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը հուլիսի 2020 թ. N 146
Նոր Հաճն

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով , Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Վեներա Մադաթի Եսայանի (ծնված՝ 05.06.1949թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Վեներա Մադաթի Եսայանի սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող 07-006-0057-0003 կադաստրային ծածկագրով, 0.040 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխուներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.09.1992 թվականի թիվ 5 որոշմամբ) և դրանից ավել օգտագործվող մինչև 20 տոկոս 0.00677 հա հողամասի նկատմամբ /ընդամենը՝ 0.04677 հա/, քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականցման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (կցվում են):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Հարավ արևելյան թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 6 հողամաս:**
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը հուլիսի 2020 թ. N 147

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԳԵՎԱՇԵՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ ***որոշում եմ***՝

1. Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 1-ին թաղամասում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0015-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.0100 հա այլ հողեր հողամասում ինքնակամ կառուցված 53.25 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նշանակության սպասարկման օբյեկտը համարել Նոր Հաճն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Փոփոխել 07-006-0015-0001-ից կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.0100 հա այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:
3. Ընդունել ի գիտություն, որ՝

3.1 շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

3.2 շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3.3 շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):
5. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 1-ին թաղամաս 1-ին փողոց, թիվ 24/1** :
6. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
7. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Արմեն Մելսիկի Հարությունյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2020 թվականի N148

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի չորս բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 280000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

30.07.2020թ.
Ք. Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի հուլիսի 30-ի N148 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Գումարի չափը՝ դրամ
1.	Հասմիկ Ավետիսյան	70000
2.	Սուսան Դանիելյան	70000
3.	Ռիտա Մեժլումյան	70000
4.	Բաշիղ Թորոսյան	70000

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31-ը հուլիսի 2020 թ. N 149
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Գագիկ Դանիելյանին և Գայանե Աբրահամյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 1090174/ 07-006-0052-0026 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.064 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրելով հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավ արևելեյան թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 8 հողամաս:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 150

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի N 1 հավելվածով 7 և N 13-Ն հրամանի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.2020 թվականի օգոստոսի 31-ին ժամը 11.00-ին հայտարարել Նոր Հաճնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր1.2-1) թափուր պաշտոնի զբաղեցնելու համար մրցույթ:

2.Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դրվում են աշխատակազմի առաջին կարգի մասնագետի Անահիտ Միրզոյանի վրա:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2020 թ. հուլիս 31
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 151

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՆԱՀԻՏ ԿԱՌԼԵՆԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<Համայնքային ծառայության մասին> օրենքի 19-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանով սահմանված <Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը>հավելվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.2020 թվականին օգոստոսի 31-ին նշանակել Նոր Հաճնի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Անահիտ Կառլենի Միրզոյանին համայնքային ծառայողի հերթական ատեստավորումը:

2.Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել համայնքի ղեկավարի օգնական՝ Արմինե Օհանջանյանին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 ՕԳՈՍՏՈՍ 3
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04-ը օգոստոսի 2020 թ. N 152

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՐԳԵՎԱՇԵՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 24/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, հաշվի առնելով Արմեն Մելսիկի Հարությունյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի օգոստոսի 03-ի N 03082020-07-0113 վկայական) Պարգևաշեն 1-ին թաղամասի 1-ին փողոցի թիվ 24/1 հասցեում գտնվող 53.25 քառակուսի մետր արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտը (ներքին՝ 41.77 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.01 հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Արմեն Մելսիկի Հարությունյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) սպասարկման օբյեկտի 1 քառակուսի մետրի համար՝ 18900 (տասնութ հազար ինը հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

3.2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

4. Արմեն Մելսիկի Հարությունյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 1006425 (մեկ միլիոն վեց հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ՝ սպասարկման օբյեկտի գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 294000 (երկու հարյուր ինսունչորս հազար) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արմեն Մելսիկի Հարությունյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Մելսիկի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04-ը օգոստոսի 2020թ. N 153

ՔԱՋԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Քաջիկ Սեդրակի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը 04082020-07-0030/ Նոր Հաճն համայնքի, Պարգևաշեն 1-ին թաղամասի, 1-ին փողոցի, թիվ 7 հասցեի, 07-006-0043-0019 կադաստրային ծածկագիրի տակ գտնվող՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.20019 հա հողատարածքից՝ <<Ա/Ձ Ստյոպա Աբգարյան>>-ի կողմից տրված ըստ բաժանման հատակագծերի (կցվում են) համաձայն, առանձնացնել առանձին հատվածներ:
2. Առաջացած հատվածները հասցեավորել՝

Հ/Հ	Բաժանված մասի հերթական համարը	Հողամասի մակերեսը /հա/	Հասցե
1	*2*	*3*	*4*
1	S1 հատված	0.16	Պարգևաշեն 1-ին թաղամաս 1-ին փողոց թիվ 7
2	S2 հատված	0.04019	Պարգևաշեն 1-ին թաղամաս 1-ին փողոց թիվ 6

3. Քաջիկ Սեդրակի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Պարգևաշեն 1-ին թաղամասի, 1-ին փողոցի, թիվ 6 հասցեում գտնվող 0.04019 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման նշանակության:
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քաջիկ Սեդրակի Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**